ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Կ Ա Ր Ծ Ի Ք

Քնքուշ Հովիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երկրի հարկային համակարգի արդյունավետությունը մեծապես որոշվում է դրանում սահմանված հարկատեսակներով, որոնց հիմնավորված սահմանումը և պետության գործառույթների պատշաճ իրականացման համար առավելագույն ծավալով եկամուտների կենտրոնացումը պետք է ուղեկցվի հարկային քաղաքականության կատարելագործմամբ և հարկային վարչարարության բարելավմամբ:

Կարևորելով Հայաստանի Հանարապետությունում հարկային համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումներն՝ այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք բացասաբար են անդրադառնում հարկային քաղաքականության վրա: Ակնհայտորեն, դրանց լուծման գործում առանցքային է հարկային վարչարարության դերը, որի կատարելագործմամբ է մեծապես պայմանավորված պետական եկամուտների ապահովումը և պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորումը: Միաժամանակ հարկային վարչարարության կատարելագործումն ուղղակիորեն փոխկապակցված է վարվող հարկային քաղաքականության հետ, ինչը պահանջում է այդ ոլորտում իրականացվող բարեփոխումները դիտարկել որպես միասնական գործընթաց: Այլ կերպ ասած՝ առանց հարկային վարչարարության արդյունավետ մեխանիզմների ներդրման և շարունակական կատարելագործման հնարավոր չէ լուծել հարկային քաղաքականության առջև դրված խնդիրները:

ՀՀ-ում հարկային քաղաքականության կատարելագործման և հարկային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով ատենախոսությունում դրվել և լուծվել են

հարցեր, որոնք ուղղված են հարկային օրենսդրության հստակության ապահովմանը, ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և դրույքաչափերի վերանայմանը, ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը, անկանխիկ եղանակով գործարքների իրականացման խթանմանը, վարձակալության պայմանագրերի պետական գրանցման պարզեցմանը, հարկային արտոնությունների տրամադրմանը, հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ընդլայնմանը, որակյալ և բանիմաց մարդկային ռեսուրսների համալրմանը, ինչով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունը, հետազոտության արդիականությունն ու նշանակությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ հարկային համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումների ու առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հարկերի գործառույթները և հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը,
- բացահայտել ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները,
- ուսումնասիրել հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները,
- գնահատել հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքները, մշակել հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ,
- հաշվարկել ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատել վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա,
- մշակել վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային համակարգի դերն ու նշանակությունը տնտեսական հարաբերությունների զարգացման գործում», գլխում ուսումնասիրվել են հարկային համակարգի էությունը, հարկերի գործառույթները, հարկման նպատակները, հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև ուսումնասիրվել է հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները», գլխում բացահայտվել են ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները, ինչպես նաև ուսումնասիրվել են հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները», գլխում հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային վարչարարությունը, մշակվել է հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ, հաշվարկվել է ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատվել է վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, մշակվել է վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության տեսամեթոդական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից հարկային վարչարարության և քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի համալիր մշակման, վերջիններիս իրականացման ընթացքում հետևողական վերահսկողության գործընթացներում: Հետազոտությունը գործնականում նախադրյալներ է ստեղծում ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկային արտոնությունների ոլորտում առկա խնդիրների լուծման, հարկային պարտքերի կրճատման, վարձակալության պայմանագրի հայտարարագրման համակարգի պարզեցմանն ուղղված հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը վերաբերում են ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր և կիրառելի ուղիների առաջադրմանը, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. Միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային համակարգի արդյունավետությունը և մշակվել են առաջարկություններ ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և շեմերի վերանայման ուղղությամբ:

2. Մշակվել են հարկային արտոնությունների տրամադրման և գնահատման մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվել՝ արտոնությունների հիմնավորվածության աստիճանի գնահատման և մշտադիտարկման մեթոդաբանություն:

3. Հարկ վճարողների վարքագծային ուսումնասիրության հիման վրա մշակվել են հարկային վարչարարության կատարելագործման նոր մոտեցումներ՝ ուղղված հարկային պարտքերի ծավալների կրճատմանը, հարկման բազաների գնահատմանն ու հարկ վճարողների հաշվառմանը, մասնավորապես՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի գրանցման ընթացակարգերի պարզեցմանը:

4. ՀՀ հարկային համակարգի ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների բարելավման նպատակով մշակվել են մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ և հարկային մարմնի աշխատողների մոտիվացիայի ու կարիերային առաջխաղացման արդյունավետ կառուցակարգեր:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության կառուցվածքում *2.3 Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ և իրավական կարգավորումները* և *3.3 Հարկային համակարգի օրենսդրաիրավական ապահովվածությունը* բաժիններում արծարծվող հիմնադրույթների մի մասը կարելի է միավորել, քանի որ բովանդակային առումով դրանք միմյանց հետ սերտ առնչություն ունեն, իսկ 3.3 բաժնին ավելի շատ հաղորդել տնտեսական, մասնավորապես՝ քաղաքականության բարելավման ուղղվածություն:

2. ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատման վերաբերյալ վերլուծություններում հեղինակը չի օգտագործում այդ գնահատականի վրա նկատելի ազդեցություն ունեցող տարբեր չափորոշիչներ: Այդ առումով, հարկային համակարգի գործունեության գնահատականն ավելի լիարժեք լինելու համար անհրաժեշտ էր աշխատանքում դիտարկել նաև այնպիսի չափորոշիչներ, որոնք կարող են առաջանալ երկրում տնտեսական հարաբերությունների կանոնակարգվածության աստիճանից, ստվերային շրջանառությունից և այլ գործոններից կախված:

3. Ատենախոսությունում հարկային համակարգի արդյունավետության գնահատումն հիմնականում իրականացվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տեսանկյունից: Վերջինս, ինչպես հայտնի է, ՀՀ-ում բավականաչափ ցածր է, ինչը, ի թիվս այլ խնդիրների, պայմանավորված է նաև հարկային վարչարարության թույլ մակարդակով, ստվերային տնտեսության զգալի ծավալներով և մի շարք այլ գործոններով: Չնայած այն հանգամանքին, որ ատենախոսությունում նշված հարցերն արժանացել են բավարար ուշադրության, այդուհանդերձ, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մակարդակի բարձրացման վերաբերյալ առարկայական առաջարկությունները կրում են մակերեսային բնույթ:

4. Հարկային հարբերությունների կարգավորման և հարկային համակարգի զարգացման միջազգային փորձի ուսումնասիրության ժամանակ նախընտրելի կլիներ այնպիսի երկրների ընտրությունը, որոնք առկա շրջանառության մակարդակով, զարգացվածության աստիճանով, ռեսուրսաապահովածությամբ, ներքին շուկայի չափերով համադրելի լինեին Հայաստանի Հանրապետությանը:

5. ՀՀ-ում ԱԱՀ-ի, ինչպես նաև այլ հարկատեսակների առաջարկվող դրույքաչափերը պահանջում են լրացուցիչ հիմնավորումներ, քանի որ ներկայումս ՀՀ հարկային օրենսգրքով ամրագրված սահմանաչափերը հետապնդում են պետական գործառույթները հնարավորինս լիարժեք կատարելու ֆիսկալ նպատակ: Այլ կերպ ասած՝ նոր դրույքաչափերի պայմաններում հնարավոր է, որ պետությունը չունենա անհրաժեշտ եկամուտներ այդ գործառույթները իրականացնելու համար: Նշված խնդիրը ատենախոսությունում չի արժանացել բավարար ուշադրության:

6. Հարկային համակարգի կարևորագույն գործառույթներին զուգահեռ հարկային համակարգն ունի կարգավորիչ, խթանիչ, ինչպես նաև սոցիալական խնդիրների լուծման լծակներ: ՀՀ-ի առումով տնտեսական կառուցվածքն արդիականացնելու, զարգացման ժամանակակից ուղղություններ ներդնելու, ինչպես նաև այդպիսի տնտեսությունների համար համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար չափազանց կարևոր է տրամադրվող հարկային արտոնությունների համակողմանի հիմնավորվածության ապահովումը: Այս առումով, կարևորվում է գործող հարկային արտոնությունների արդյունքների և հետևանքների մշտադիտարկումը, որը հանրապետությունում իրականացվում է ոչ լիարժեք ու առարկայական կերպով: Այդ առումով, ցանկալի կլիներ աշխատանքում ներկայացվեին ՀՀ-ում արտոնությունների պատշաճ մշտադիտարկման իրականացման և դրանից բխող խնդիրների լուծման մոտեցումներ:

7. Աշխատանքում առկա են նաև որոշ տեխնիկական բացթողումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակության վրա:

Քնքուշ Հովիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով թեկնածական ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանում, իսկ հիմնական դրույթները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

Սեղմագիրը կազմված է ԲԿԳԿ-ի կողմից սեղմագրերին ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչպես նաև համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Քնքուշ Հովիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության
հարկային տեսչություն-վարչության պետ
Տնտեսագիտության դոկտոր Ա.Գ.Սաֆարյան

15 օգոստոսի 2024թ.

Պարոն Ա.Գ.Սաֆարյանի
Ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Ժ.Գևորգյան

15 օգոստոսի 2024թ.